**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**N ԳՀԱՊՁԲ-21-10/1-6 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան «14» 04 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Մանուկյանի, ով գործում է «ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **15.02.2021թ.** կնքված **N ԳՀԱՊՁԲ-21-10/1-6** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով շինանյութերի (այսուհետ՝ Ապրանք) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Վաճառողը պարտավորվում է Գնորդի հանձնարարությամբ մատակարարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող Ապրանք՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

## 2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Վաճառողի մատակարարման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է **15 880 000 /տասնհինգ միլիոն ութ հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդն նվազեցնելու այդ գինը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2021թ.:

## 3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում և Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի և Պայմանագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների մատակարարման դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք.Երևան, Սևանի փ. 86/3
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050022342551001
ՀՎՀՀ 08414357
Տնօրեն

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-10/1-6 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV կոդ | անվանումը | Չ/Մ | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը/Ժամկետը | |
| | | | | | | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ |
| 1 | 44411110/501 | Ջրի ծորակ 1 փականով | հատ | 3000 | 6000000 | 2000 | ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | 1000 |
| 2 | 44411120/501 | Ջրի ծորակ 2 փականով | հատ | 5000 | 1000000 | 200 | ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 200 | - |
| 3 | 44111720/501 | Սալիկ, կերամիկական, պատերի համար (Սալիկ պատի կերամիկական) | քմ | 2235 | 4470000 | 2000 | ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | 1000 |
| 4 | 44111710/501 | Սալիկ, կերամիկական, հատակի համար (Սալիկ հատակի կերամիկական) | քմ | 1695 | 3390000 | 2000 | ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 1000 | 1000 |
| 5 | 24911900/501 | Սոսինձ (Սալիկի սոսինձ) | կգ | 60 | 1020000 | 17000 | ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության կենտրոնական պահեստ՝ Արշակունյաց 135 | 850 | 850 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

**Հավելված N 2**
**N ԳՀԱՊՁԲ-21-10/1-6 պայմանագրի**
**N 1 Համաձայնագրի**

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքների | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | CPV կոդ | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | |
| | | | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ. | Ընդամենը |
| 1 | 44411110/501 | Ջրի ծորակ 1 փականով | 3000000 | 6000000 | 6000000 | 6000000 |
| 2 | 44411120/501 | Ջրի ծորակ 2 փականով | 1000000 | 1000000 | 1000000 | 1000000 |
| 3 | 44111720/501 | Սալիկ, կերամիկական, պատերի համար (Սալիկ պատի կերամիկական) | 2235000 | 4470000 | 4470000 | 4470000 |
| 4 | 44111710/501 | Սալիկ, կերամիկական, հատակի համար (Սալիկ հատակի կերամիկական) | 1695000 | 3390000 | 3390000 | 3390000 |
| 5 | 24911900/501 | Սոսինձ (Սալիկի սոսինձ) | 510000 | 1020000 | 1020000 | 1020000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գ Ն Ո Ր Դ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**

«ԲԵՍԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրեն

[illegible] ԱՌՈՒՔՅԱՆ